

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահապոյանը

ք.Հրազդան

20.10.2012թ., ժամը՝ 11⁰⁰

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներնրից 63-ը /բացակայում էին Ծաղկաձոր, Բալահովիտ, Զովք, Արագյուղ համայնքների ղեկավարները/

-Վ.Բակլաչյան, Կ.Մարգարյան, Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ

-Մ.Գարեգինյան – ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԷՐ՝

-Ա.Գևորգյան –Տարածքային կառավարման նախարար, ՀՀ փոխվարչապետ

-Է.Բախշյան - Տարածքային կառավարման նախարարի տեղակալ

-Ա.Գիլոյան - Տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ

-Հ.Գալստյան - Տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության պետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Հրատապ ծրագրերով իրականացվող աշխատանքների ընթացքը:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Վ.Բակլաչյան/

2.Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/

3.Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյան/

4.Եկամտահարկի և սոցվճարների մասով օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը համայնքների բյուջեների վրա:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/

5.Այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝

1.ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Վ.Բակլայանի զեկուցումը հրատապ ծրագրերով իրականացվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Տեղեկանքը կցվում է/:

2.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի զեկուցումը համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: / Տեղեկանքը կցվում է/:

3.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյանի զեկուցումը գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: / Տեղեկանքը կցվում է/:

4.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի զեկուցումը համայնքների բյուջեների վրա եկամտահարկի և սոցվճարների մասով օրենսդրական փոփոխությունների ազդեցության վերաբերյալ:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: / Տեղեկանքը կցվում է/:

Տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ պարոն Ա.Գևորգյանը ընդհանուր առմամբ բավարար համարեց մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը՝ վստահություն հայտնելով, որ համեմատաբար ցածր ցուցանիշներ ունեցող համայնքներն առաջիկա ամիսներին առավել հետևողական աշխատանքներ կիրականացնեն այդ ուղղությամբ:


Ա.Գևորգյանը պարզաբանումներ տվեց նաև համայնքապետերի բարձրացրած հարցերին:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ՝

Համայնքների ղեկավարներին՝

-Սեփական եկամուտների հավաքագրման առաջադրանքները հասցնել առավելագույնի:

-Սերմացու ցորենի գումարների հավաքագրման աշխատանքներն ավարտել մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը: Եթե դա հնարավոր չէ իրականացնել բնակչության միջոցներով, ապա ավագանիների որոշմամբ փոխանցումները կատարել համայնքների բյուջեներից:

 Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ